ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

Էգեյան ծովի մերձափնյա գաղթօջախների առաջացումը կապվում է հայրենի երկրից հարկադրաբար գաղթելու իրողության հետ: Հայության զանգվածային տեղաշարժերի նոր փուլ սկսվեց Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375), երբ ժողովրդի բազմությունները ոչ միայն գերեվարվեցին, այլև տեղահանվեցին կամ գաղթեցին Ասիայի ու Եվրոպայի բազմաթիվ երկրներ: Այս ժամանակաշրջանում և հետագայում նոր գաղթավայրեր ստեղծվեցին Արևելյան Եվրոպայի երկրներում, Պարսկաստանում, Սև և Միջերկրական ծովերի առափնյա տարածքներում, Թուրքիայի փոքրասիական շրջաններում՝ ընդհուպ մինչև դրանց արևմտյան մասը և այլուր:

Էգեյանի ծովամերձ շրջանների (Զմյուռնիա, Դենիզլի, Մանի սա, Այդրն, Մենեմեն, Քուշադա, Քրքաղաչ, Սյոքե, Նազիլլի և այլն) հայ գաղթօջախների կազմավորման մասին փաստական վկայությունները առ այսօր, կցկտուր բացառություններով, սկսվում են XVI դարից: Զմյուռնիայի վաղեմի հայկական գերեզմանատնից ցայժմ հայտնի ամենահին դամբանագրերը թվագրված են 1551 և 1567 թթ.[1]: Ավելի ուշ՝ 1622 թվականից է ավանդված առ այսօր մեզ հայտնի ձեռագիր հիշատակարանը, որ վկայում է դրան նախորդած ժամանակներում այստեղ հայերի ներկայության մասին[2]:

Զմյուռնիայում «վաճառականության մեջ հաջողակ» հայերի մասին առաջին տեղեկությունը տրվում է 1261 թ. մարտի 13-ին Միքայել Պալեոլոգ կայսեր (1259-1282) և ջենովացի առևտրականների միջև կնքված դաշնագրի տեքստում (ըստ Բ. Սլարսի): Այս ժամանակաշրջանում Զմյուռնիայում հայ վաճառականներ կային Զուղայից, Նախիջևանից, Ագուլիսից և Հայաստանի արևելյան այլ շրջաններից՝ ուղղակի կապված լինելով Ջենովայի ու Վենետիկի խոշոր առևտրականության հետ[3]:

Եթե XIII դարի երկրորդ կեսից հայտնի են Զմյուռնիայում գործող հայ վաճառականներ, ապա նույն դարի վերջերին - XIV դ. առաջին կեսին տեսնում ենք նաև հայ մտավորականի՝ Նիկողայոս Արտավազդ Ռաբդասին, որ քառակուսի արմատ դուրս բերող առաջին մաթեմատիկոսն է, ինչպես նշում է Ն. Ադոնցը: Ն.

---

[1] **Քոսեան Հ.,** *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1899, էջ 82:*

[2] *Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 6332, էջ 513:*

[3] **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, Գահիրէ, 1955, էջ 527:*

Ադոնցը կարծում է, որ Արտավազդը (ինչպես և նրան առնչվող մյուս հայերը), պահպանելով իրենց ազգային անունները՝ ցույց են տալիս, որ «նոր են եկել Արևելքից և հնաբնակ չեն Բյուզանդիայում»[4]: Ազգային անունները, ի դեպ, նրանք կարող էին պահպանած լինել նաև հայկական միջավայրի կամ համայնքի (Զմյուռնիայում) առկայության դեպքում ևս: Բոլոր դեպքերում, փաստն այն է, որ Արտավազդը պահպանել է և հայկական անունը, և իբրև դրա բաղադրիչ՝ իր քաղաքի (չի բացառվում նաև ծննդավայրի) հիշատակումը: Ավելացնենք նաև, որ «վաճառականության մեջ հաջողակ» հայերը կարող էին լինել ոչ միայն երթևեկ վաճառականներ, այլև բուն զմյուռնացի հայ վաճառականներ, այսինքն, տեղի հայ համայնքի անդամներ:

Գաղթօջախի գոյացման կամ նոր գաղթերով համալրման վերաբերյալ ուշագրավ հիմք է Մ. Չամչյանի աշխատության այն հատվածը, որն առնչվում է Կիլիկիայի հայոց թագավորության անկման հետևանքներին: Ժողովրդի մի մասը ցրվում է երկրով մեկ և ամրանում անառիկ բերդերում, լեռնային բնակավայրերում և այլուր, «և բազումք ևս վաղագոյն աճապարեալ խոյս ետուն յաշխարհս հեռաւոր՝ ի կողմանս Փոքրուն և Մեծին Հայոց և երկիրս Վրաց և Աղուանից և ի սահմանս Յունաց և Պարսից ևս և ի կոզիս և ցրուեցան յայլ և այլ թագաւորութիւնս քրիստոնէից, որոց թիւն եղև ըստ ոմանց իբր երեսուն հազար անձանց և ըստ այլոց՝ աւելի յոյժ», - գրում է Մ. Չամչյանը[5]:

Դեպի Զմյուռնիա գաղթի հավանականությունը՝ դեռևս XI դ. սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանում, թերևս, փոքր-ինչ ավելի հուսադրող, գտնում ենք Հ. Մանանդյանի աշխատության մեջ: «Շատ հավանական է, որ Ալփասլանի հարձակումներից հետո Փոքր Ասիա էին գաղթել նաև հայության ուրիշ հատվածներ Հայաստանի հյուսիսային և արևելյան կողմերից: Հայ ազնվականության ու ռազմական ուժի մասսայական այս գաղթը Փոքր Ասիա... որ պարբերաբար շարունակվել էր 11-րդ դ. առաջին քառորդից սկսած՝ հիմք ծառայեց այստեղ հայկական նոր իշխանության ծագման՝ Կիլիկիայի լեռներում»,-գրում է նա[6]:

Հավանականությունը՝ հավանականություն, բայց իրողությունն այն է, որ տակավին չլուծված է մնում Զմյուռնիայի գաղթօջախի սկզբնավորման խնդիրը: Հետազոտողները միասնական տեսակետ չունեն այս հարցում: Գաղթօջախի պատմության առաջին ուսումնասիրող Բ. Սլարսը, իր ֆրանսերեն աշխատության մեջ (Slars B. E´tude sur Smyrne, Paris, 1868) կարծում է, որ հայերը Զմյուռնիա են գաղթել

---

[4] **Ադոնց Ն.,** *Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 536:*

[5] **Չամչեան Մ.,** *Հայոց պատմութիւն, հ. Գ, Ե., 1984, էջ 359:*

[6] **Մանանդյան Հ.,** *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Ե., 1952, էջ 62-63:*

Ռուբինյանների անկումից՝ 1375 թ. հետո, երբ «իբր երեսուն հազար ընտանիք անցան Կիպրոս, Ռոդոս, Կրետէ և ուսկից տարածուեցան նաև Իտալիա»[7]: Կարելի է կարծել, որ Բ. Սլարսի աղբյուրն այս դեպքում Մ. Չամչյանն է, որը, ինչպես տեսանք վերը, նշում էր Կիլիկիայից «երեսուն հազար անձանց/ գաղթելու մասին: Այս հեղինակը վկայակոչում է նաև, որպես հնագույն հիշողությունը կրողների, հայ «ալևորներին և ուսումնականներին», գլխավորապես Ս. Պալապանյանին (ուսյալ քահանա, մանկավարժ) և Ղ. Պալդազարյանին («Արշալոյս Արարատեան» լրագրի խմբագիրը), որոնք նրան տեղեկություններ տրամադրելիս գաղթօջախի սկիզբն են համարել 1375-ին հետևող տարիները[8]: «Այս առաջին գաղթի ժամանակ,- հարում է Բ. Սլարսը, -Հայք Զմիւռնիա հաստատուելով՝ կառուցին մատուռ մը, որուն կից ունէին գերեզմանոց մը: Դեռ այս օրս կը տեսնուին սոյն մատրան վայրն և գերեզմանոցին ցանկերը (ցանկապատերը-Խ.Ա.)՝ տաճկաց թաղին ճիշտ քովը: Հայոց եկեղեցւոյն (իմա՛ այժմյան-Խ. Ա.) մեծ գերեզմանոցին մէջ տակաւին այս օրս կայ գերեզմանաքար մը վերոյիշեալ գերեզմանոցէն փոխադրուած, որուն վրայ կը կարդացուի թուական մը 215 տարուան (իմա՛ XVII դ. երկրորդ քառորդի-Խ.Ա.): Ալևոր Հայք կըսեն, թէ շատ լաւ կը յիշեն, որ վերոյիշեալ գերեզմանոցին մէջ աւերակ դառնալէն յառաջ տեսած են շիրիմներ, որոց թուականը շատ աւելի հնագոյն եղած է: Այս ամէնը նմանապէս իմ կարծիքիս հաստատութեան կը նպաստեն և կրկնել կուտան, թէ Հայոց Զմիւռնիա գաղթելը ԺԴ-երորդ դարու մէջ եղած է»[9]:

Զմյուռնահայ գաղթօջախի հեղինակավոր հետազոտողը՝ Հ. Քոսյանը, իր աշխատության մեջ[10] ընդունում է Սլարսի տեսակետը՝ իր կողմից ավելացնելով որոշ մանրամասներ. «Գաղթականութեան համար ըսուածները (Սլարսի-Խ.Ա.) կը հաստատենք մենք ալ: Հայք այլևայլ դարերու մէջ և զանազան կողմերէ Զմիւռնիա դիմած են: Առաջին անգամ ամենայն հավանականութեամբ Ռուբինեանց թագաւորութեան անկումէն ետքն ոտք կոխած են հոս»: Նա հավելում է, որ 200 տարվա հնություն ունեցող գերեզմանաքարերի կարելի է հանդիպել և ավելին. «Աւելի հնագոյն՝ 300 տարուան և աւելի թուական ունեցող կրկին գերեզմանաքարեր կը գտնուին, որք նախկին գերեզմանոցէն փոխադրուած են այժմեան եկեղեցւոյ պարտէզը»[11]: Հիրավի, Հ. Քոսյանն իր գրքում մեջբերել է իր նշած հնագույն՝ Զմյուռնիայում

---

[7] *Բ. Սլարսի աշխատությունը մենք ձեռքի տակ չունենք, ուստի նրա տեսակետը վերարտադրում ենք Հ. Քոսյանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» գրքի հանգամանալի շարադրանքի հիման վրա:*

[8] *Տե՛ս* **Քոսեան Յ.,** *նշվ. աշխ., էջ 40:*

[9] *Նույն տեղում, էջ 32:*

[10] **Քոսեան Յ.,** *Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հ. Ա-Բ, Վիեննա, 1899:*

[11] *Նույն տեղում, էջ 38:*

նահատակված Սարգսի և Գասպարի դամբանականները, որոնք թվագրված են համապատասխանաբար 1551 և 1567 թվականներով[12]:

Սրանք անհերքելի փաստեր են, որ հաստատում են XVI դ. երկրորդ կեսից առաջ հայկական գերեզմանատան, ուրեմն և համայնքի գոյությունը Զմյուռնիայում: Մնում է միայն ավելացնել, որ աչքի առջև ունենալով իր իսկ հղած այս փաստերը, Հ. Քոսյանը, այնուամենայնիվ, հետևում է Սլարսին և, ինչպես տեսանք վերը, եզրակացնում, որ «ամենայն հաւանականութեամբ» հայերն այստեղ հայտնվել են կիլիկյան թագավորության անկումից հետո:

Փոքրասիական շրջաններում հայ գաղթականության ներկայության հավանականությունը ավելի վաղ շրջանի է վերագրում Ղ. Ալիշանը՝ այդ հասցնելով մինչև XIV դ. երկրորդ կես և XV դ. սկզբներ: «Արդէն Հայք Կիլիկիոյ իրենց տէրութեան վերջի տարիներուն սկսեր էին սփռիլ ինչուան ի Յունաստան և ի կղզիս ծովամիջի Փոքր Ասիոյ…», - գրում է նա[13]:

Զմյուռնահայ համայնքի սկզբնավորման հարցին քանիցս անդրադարձել է ականավոր պատմաբան Ա. Ալպոյաճյանը: Նա հակադրվում է Հ. Քոսյանին՝ պնդելով, որ գաղթօջախի սկիզբը պետք է համարել ոչ թե XIV դարը, այլ դրանից 200-300 տարի և անգամ ավելի առաջ՝ փաստարկելով Բ. Սլարսի և ապա Հ. Քոսյանի վկայակոչած՝ Միքայել Պալեոլոգի և ջենովացիների 1261 թ. դաշնագրում հայերի մասին հիշատակությունը: Կնշանակի, կարծում է նա, որ այդքան կարևորություն ստացած Իզմիրի հայերը, «արդէն անկէ բաւական առաջ ալ հոն հաստատուած էին: Վաւերական աղբիւրներ, յիշատակարաններ թէեւ կը պակսին, բայց գերեզմանաքարեր եւ իզմիրցիներու խօսած լեզուին ինչ-ինչ երեւոյթները ցոյց կուտան, թէ Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մէջ եւ կամ աւելի առաջ»,-գրում է նա[14]: Նման եզրակացության համար պակասում են ոչ միայն վավերական աղբյուրներն ու հիշատակարանները, այլև գերեզմանաքարերը, որպիսիք անհայտ են. վերը ցույց տրվեց, որ գաղթօջախում գտնված ամենահին գերեզմանաքարը վերաբերում է 1551 թվականին: Մյուս կողմից, դրան նախորդող փաստական նյութի պակասը դեռևս չի բացառում Զմյուռնիայում և շրջակայքում հայկական գաղթօջախի գոյությունը, որ կարող ենք ընդունել համոզիչ մտահանգումների շնորհիվ: Ինչ վերաբերում է զմյուռնահայ բարբառի «ինչ-ինչ երեւոյթներին», ապա այստեղ ևս հնարավոր չէ հենվել XI կամ XII դդ. որևէ աղբյուրի

---

[12] Նույն տեղում, էջ 82-83:

[13] Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարբնչութիւնք Հայոց և Վենետաց ի ԺԳ-Դ և Ի ԺԵ-Զ դարու, Վենետիկ, 1896, էջ 178:

[14] Ալպոյաճեան Ա., Առաջնորդութիւն Հայոց Իզմիրի (Բիւզանդիոն, 1908, ապր. 10/23):

վրա, այդպիսին չկա, կան միայն շատ ավելի ուշ շրջանի զմյուռնահայ բարբառի տվյալներ, բայց դրանք ավելի շուտ կարող են դիտվել որպես հետագա դարերի գաղթերի հետևանք: Պատկանելով բարբառների ***կը*** *ճյուղին և «չափազանց նման» լինելով Կ. Պոլսի ու հատկապես Եվդոկիայի բարբառներին*[15]*, զմյուռնահայ բարբառը, հիրավի, արևելահայերենի տարրեր կարող էր ներառել միայն XVII դ. առաջին տասնամյակներին, երբ բազմաթիվ արևելահայեր գաղթեցին Զմյուռնիա և հատկապես շրջակայք:*

Հավանականության սահմաններում և ընդհանուր պատմագիտական վերլուծությունների մեջ են շրջանառում նաև Ա. Ալպոյաճյանի հետագայի դիտողությունները դեպի Զմյուռնիա գաղթի մասին՝ Կիլիկիայի թագավորության անկումից առաջ՝ XIII դ.: Վկայակոչելով Վարդան պատմագրին՝ նա գրում է, որ հայերը, խուսափելով մոնղոլական հեղեղից, դիմել են Ռումի սուլթանների երկիր. «Այս գաղթականներէն հաւանական է, որ մաս մը խուճապահար փախուստի ընթացքին առաջացած է մինչև Փոքր Ասիոյ արեւմտեան ծայրը, Հոնիականի եզերքը՝ Զմիւռնիա, որուն հայ գաղութին հաստատութիւնը կը կարծուի՝ ժամանակակից է Չարմաղան թաթար զօրապետին Հայաստանի նուաճման թուականին, այսինքն 1236-ին»[16]*:*

Ա. Ալպոյաճյանի դիտողությունները՝ գաղթօջախի սկզբնավորման ժամանակի և սրան առնչվող հանգամանքների հարցում, ամբողջովին համընկնում են իրենից՝ Ա. Ալպոյաճյանից վեց տարի առաջ Կ. Պոլսի «Արևելք» լրագրում ***Ատոմ*** *ստորագրությամբ հանդես եկած հեղինակի հրապարակումներում առկա դրույթներին: Այսպես, Ատոմը գրում է. «երբ 1261-ին (նկատի ունի Մ. Պալեոլոգի և ջենովացիների միջև կնքված պայմանագրի տարին-Ա. Խ.) պաշտօնապէս այնքան գովեստներով կը խօսուի Իզմիրի վրայ, անշուշտ, շատ տարիներ առաջ քաղաքը գտնուած է այդ նախանձելի կացութեան մէջ: Անկարելի է, որ այդ վիճակը ստացած ըլլա անակնկալ կերպով, 1261 մարտ 13-ին, այլ աւելի առաջ երթալով եւ կոթնելով մեր առաջ բերած ապացոյցներուն, կրնանք Իզմիրի գաղթականութեան ծագումը ԺԴ դարէ աւելի առաջ թուականներու վերագրել, որով իրաւամբ կրնանք հասնիլ ԺԱ կամ ԺԲ դարուն եւ կամ աւելի առաջ»*[17]*: Իր հերթին Ա. Ալպոյաճյանը գրում է. «Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են ԺԱ կամ ԺԲ դարերուն մէջ եւ կամ աւելի առաջ»*[18]*: Ատոմը գրում է. «Իզմիրի հայը գլխաւորաբար արեւելեան գաւառներէ*

---

[15] **Աճառյան Հ.,** *Հայ բարբառագիտություն: Էմինյան ազգագրական ժողովածու, հ. 6, Մոսկվա-Նախիջևան, 1911, էջ 239:*

[16] **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, Գահիրէ, 1955, էջ 544;*

[17] **Ատոմ,** *Իզմիրի Ս. Լուսաւորչեան հիւանդանոցը եւ իր տեղեկագիրը (Արեւելք, 1902, յունուար 31/փետր. 13):*

[18] **Ալպոյաճեան Ա.,** *Առաջնորդութիւն հայոց Իզմիրի (Բիւզանդիոն, 1908, ապր. 10/23):*

եկած ըլլալնին կը հաստատեն ոչ միայն շատ մը գերեզմանաքարեր, այլեւ նոյն իսկ ցարդ խոսուած լեզուին մէջ ինչ-ինչ շատ հետաքրքրական երեւոյթներ»[19]: Ա. Ալպոյաճյանը գրում է. «գերեզմանաքարեր եւ իզմիրցիներու խօսած ինչ-ինչ երեւոյթներ ցոյց կուտան, թէ Իզմիրի հայերն ուղղակի Պարսկաստանի կողմէն գաղթած են»[20]:

Այն տեսակետը, որ առաջ է քաշել Ատոմը 1902-ի «Արեւելքում», կրկնվում և զարգացվում է 1908-ի «Բյուզանդիոնում»՝ Ա. Ալպոյաճյանի կողմից: Կարելի է ենթադրել, որ Ատոմ ծածկանունով հանդես եկած հեղինակը հենց ինքը՝ Ա. Ալպոյաճյանն է[21]: Այստեղ ավելացնենք, որ Ա. Ալպոյաճյանը մի տեղ թռուցիկ, բայց և «ԺԴ դարուն գաղթականության մը եկած ըլլալը (իմա՛ Զմյուռնիայի հայ գաղթականության սկիզբը-Խ.Ա.) կը հերքէ՝ բանավոր առարկութեամբ»[22]:

Գաղթօջախի գոյացումը ոչ այնքան որոշակիորեն, շատ ավելի վաղ ժամանակների է վերագրում Գ. Օ. Գալուստյանը: Նա, փաստորեն, միանում է զմյուռնացի հրապարակախոս Թ. Ճերմակյանի տեսակետին, որի համաձայն, գաղթօջախը հաստատվել է XIV դ. շատ ավելի վաղ, XII-XIII դդ. կամ անգամ ավելի հին ժամանակներում[23]: Նա արժանահավատ չի համարում, նախ, Կիլիկիայից հայերի գաղթը 1370-1380-ական թթ.՝ փաստարկելով, որ այս տասնամյակներին իրենք՝ քաղաքին տիրող Հռոդոսի ասպետները, հազիվհազ էին դիմակայում սելջուկների ճնշումներին, և որ գաղթականների աչքին այդ քաղաքն արդեն իսկ հուսալի ապաստան չէր կարող դիտվել: Այնուհետև, կարծում է նա, հայերն այստեղ չէին կարող գաղթել Կիլիկիայից, որովհետև զմյուռնահայ համայնքը երբևէ կապված չի եղել Կիլիկիայի աթոռի հետ, և այդ վկայող ոչ մի գերեզմանաքար կամ այլ վկայություն չկա: Մինչդեռ, շարունակում է նա, հայտնի են այդ գաղթօջախի վաղեմի սերտ կապերն ու հարաբերությունները Էջմիածնի հետ, քանի որ հնագույն տապանաքարերը «Արարատայ նահանգի անուններով կը հաստատեն, թէ զմիւռնահայութիւնը կիլիկեան ծագումով ոչինչ ունեցած է իր մէջ»[24]:

Հասկանալի է գաղթօջախի պատմությունը շատ ավելի հետ տանելու՝ Գ. Գալուստյանի մոտեցումը: Սակայն նրա փաստարկներն անվրեպ չեն: 1370-1380-

---

[19] **Ատոմ,** *նշվ. աշխ.:*

[20] **Ալպոյաճեան Ա.,** *նշվ. աշխ.:*

[21] *Այս անվամբ մեծավաստակ պատմաբանի ստորագրությանը չի հիշատակում ո՛չ Գ. Ստեփանյանը իր Կենսագրական բառարանում (երեք հատորով, հ. I, Ե., 1973, էջ 55-56) և ո՛չ էլ Բ. Հովակիմյանը՝Հայոց ծածկանունների բառարա-նում (Ե., 2005):*

[22] **Ալպոյաճեան Ա.,** *նշվ. աշխ.:*

[23] **Գալուստեան Գ. Օ.,** *Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը: Յունահայ տարեգիրք, Աթէնք, 1928, էջ 279:*

[24] *Նույն տեղում, էջ 277-278:*

ական թթ. Կիլիկիայից հայերի գաղթը ժխտելիս նա անտեսում է այն, որ Հռոդոսի ասպետները, մինչև Թիմուրի կողմից Զմյուռնիան գրավելը, հաջողությամբ պայքարում էին Այդընի էմիրության դեմ՝ սատարվելով պապի և Վենետիկի կողմից: Այս պայմաններում հնարավոր էր հայերի գաղթը ասպետների կողմից վերահսկվող տարածքներ, թեև դժվար է հաստատապես պնդել Բ. Սլարսի և Հ. Քոսյանի վարկածը, ըստ որի, Կիլիկիայից հայերը գաղթել են Կիլիկիայի անկումից հետո: Ինչ վերաբերում է «Արարատյան նահանգի» տեղանուններով և անձնանուններով հայտնի տապանաքարերին, ապա դրանք պատկանում են Շահաբասի ժամանակվա գաղթականներին ու նրանց սերունդներին և համեմատելի չեն XIV դ. վերջին քառորդի գաղթի հետ: Եվ վերջապես, զմյուռնահայերը, եթե ընդունենք, որ գաղթել էին հենց այդ ժամանակ, չէին կարող առնչվել Էջմիածնի հետ, որովհետև կաթողիկոսական աթոռն այստեղ պետք է վերադառնար հաջորդ դարում միայն՝ 1441 թ.:

Գաղթօջախի սկզբնավորման խնդիրը քննարկել է Հ. Աճառյանը՝ կարելի է ասել, բավական ուշ հրատարակված իր աշխատության մեջ[25]: Նա, իրոք, վստահելի տեղեկություն է տալիս Էգեյանի այս տարածաշրջանի հայ գաղթականության մասին, որ վերաբերում է XII դարին: Հ. Աճառյանը գրում է, որ 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովում, որ գումարվել էր Գրիգոր կաթողիկոսի հրավերով՝ հույների հետ միության խնդիրը քննարկելու համար, «ներկայ էր նաև Սարգիս եպիսկոպոս Լաւոտիկէի, որ հիմակուան Տենիշլիի (վրիպակ է, պետք է լինի Տենիզլիի-Ա. Խ.) կողմերը կիյնա, Լաւոտիկէի մէջ կը ցուցնէ, թէ նոյն ժամանակ բաւական մեծ հայ գաղթականութիւն կար հոն[26]»:

Այս փաստը հիմնավորված նորություն է Էգեյանի շրջանի հայ գաղթականության պատմության մեջ: Եթե Դենիզլիի կողմերում XII դ. գործել է հայ եպիսկոպոս, ուրեմն, առնվազն գործ ունենք Հայ առաքելական եկեղեցու ոլորտում գտնվող տարածքի՝ ասել կուզի՝ հայկական մի համախումբ հանրության հետ: Նկատենք, որ XIII դ. սկզբին սելջուկները Դենիզլին զիջել էին բյուզանդացիներին[27], որ ենթադրում է քրիստոնեական տարրի, այդ թվում և զգալի թվով հայերի բնակությունն այստեղ, գոնե վերջիններիս հոգևոր գլխի նստավայր լինելու տեսակետից ևս:

---

[25] Աճառյան Հ., *Հայ գաղթականության պատմություն, Ե., 2002:*

[26] *Նույն տեղում, էջ 549-550: Հռոմկլայի ժողովը գումարվել է 1179 թ. Զատկին և դրան մասնակից հոգևորականների մեջ էր Սարգիս Լավոդիկեի եպիսկո-պոսը, «որով Կիլիկիոյ հետ մօտ յարաբերութիւններ ունեցող եպիսկոպոսներ կըլլան 15» (*Օրմանեան Մ., *Ազգապատում, հ. 1, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 1718): Ավելի քան հավանական է, որ Զմյուռնիայի շրջակայքը, այս դեպքում՝ Դենիզլին, կամ որ նույնն է՝ Էգեյանի տարածքների հայ գաղթականության բնակավայրերը ենթարկված լինեին Կիլիկիայի աթոռին*

[27] *Տե՛ս* Гордлевский Б. А. *Избр. соч., т. 1, М., 1960, с. 53.*

Գաղթօջախի հաստատման սկիզբը XI-XII դարերին է վերագրվում ՀՀ ԳԱ հրատարակած Հայ ժողովրդի պատմության համապատասխան հատորում՝ որևէ նոր բան չավելացնելով վերը հիշված հեղինակների տեսակետներին[28]: Այդ հիմնահարցը ավանդականորեն՝ ըստ Բ. Սլարսի և Հ. Քոսյանի է դիտարկվում նաև ՀՀ ԳԱԱ հետագա հրատարակություններում, այդ թվում և տողերիս հեղինակի շարադրանքներում՝ գաղթօջախի հաստատման սկիզբը տեղադրելով Կիլիկիայի հայկական թագավորության անկմանը հետևող ժամանակաշրջանը (1375-ից հետո-1380-ական թթ.)[29]:

Հանրագումարի բերելով զմյուռնահայ գաղթօջախի պատմության առաջացման վերաբերյալ տարաբնույթ կարծիքները՝ հանգում ենք հետևյալ եզրակացության.

Զմյուռնահայ գաթօջախի սկզբնավորման ժամանակի վերաբերյալ հայագիտության մեջ առկա են իրարամերժ կարծիքներ, որոնք ենթադրում են XI-XIV դդ. միջև ընկած ժամանակաշրջանները: Որոշ բացառություններով, այդ կարծիքները հենվում են ոչ թե նյութական տվյալների (հիշատակարաններ, վիմագիր արձանագրություններ, որպիսիք հայտնի են միայն XVI դ. երկրորդ կեսից), այլ մտահայեցողական, տեսական դատողությունների վրա: Զմյուռնիայում հայ գաղթօջախին վերաբերող ամենահին նյութական վկայությունները (դամբանագրեր) ավանդված են 1551 և 1567 թվականներից:

Այսուհանդերձ, Էգեյանի մերձափնյա տարածքների և Զմյուռնիայի հայ գաղթօջախների ավելի վաղ գոյության մասին պահպանվել են թեկուզ կցկտուր, բայց անհերքելի տվյալներ, որպիսիք են Զմյուռնիայի հայ վաճառականների հիշատակումը 1261 թ. հույն-ջենովական պայմանագրում և Լավոդիկեի (Դենիզլիի շրջան) Սարգիս եպիսկոպոսի գործառույթը 1179 թ. Հռոմկլայի եկեղեցական ժողովում, որ վկայում է Էգեյանի այդ տարածաշրջանում հայ համայնքի առկայության մասին:

XII-XIII դդ. հայ գաղթօջախներ են գոյացել կամ գործել ոչ միայն Զմյուռնիայում, այլև դրան կից փոքրասիական շրջաններում, ընդ որում, վերջիններս, գոնե մեզ հայտնի տվյալներով, վկայված են ավելի վաղ, քան բուն Զմյուռնիայի գաղթօջախը: Հետևաբար, Էգեյանի մերձակայքում հայ գաղթօջախների առաջացումը (կամ արդեն գոյություն ունենալը) կարելի է համարել ոչ ուշ, քան XII դարը, բուն Զմյուռնիայի գաղթօջախինը՝ XIII դարը:

---

[28] *Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Ե., 1972, էջ 309 (հեղ.՝* **Ղազարյան Հ., Խառատյան Ա.***):*

[29] *Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Ե., 2003, էջ 178: Հայոց պատմություն, հ. 2, Գիրք երկրորդ, Ե., 2014, էջ 703:*

О ФОРМИРОВАНИИ АРМЯНСКОЙ КОЛОНИИ СМИРНЫ

ХАРАТЯН А. А.

Резюме

О более раннем формировании армянских колоний на прибрежных территориях Эгейского моря и в Смирне сохранились хоть и скудные, но при этом неоспоримые данные, каковыми являются упоминание армянских купцов Смирны в греческо-генуэзском договоре 1261 г. и фактор участия лаодикейского (район Денизли) епископа Саргиса на церковном соборе Ромклы в 1179 г., что свидетельствует о существовании в XII в. (либо до этого) армянской колонии в этой части Эгейского побережья.

В XII-XIII вв. армянские колонии формировались не только в Смирне, но и в сопредельных ей районах Малой Азии. Причем последние, по известным нам сведениям, были засвидетельствованы гораздо раньше, нежели смирнинская колония.

Следовательно, возникновение (либо существование) армянских колоний на прибрежных территориях Эгейского моря можно датировать не позднее, чем XII в., а смирнинской колонии – XIII веком.

ON THE FORMATION OF THE ARMENIAN COLONY OF SMYRNA

A. KHARATYAN

Abstract

The earlier formation of the Armenian colonies on the coastal territories of the Aegean Sea and in Smyrna wound up at least meager, but indisputable data, such as the mention of Smyrna's Armenian merchants in the Greek-Genoese treaty of 1261 and the factor of participation of the Laodicean (Denizli district) Bishop Sargis at the church cathedral of Hromkla in 1179, which indicates the existence in the XII century (or before) the Armenian colony in this part of the Aegean coast.

In the XII-XIII centuries Armenian colonies were formed not only in Smyrna, but also in the adjacent areas of Asia Minor. And the latter, according to the information we know, were witnessed much earlier than the Smyrna colony.

Consequently, the emergence (or existence) of the Armenian colonies on the coastal territories of the Aegean Sea can be dated no later than the 12th century, and the Smyrna colony by the thirteenth century.